

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 10/1

9 մարտի 2016 թ.

Քննարկվեց Ա/Ձ Յուրի Ճաղարյանի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 14.10.2015 թ-ի թիվ 177/05 որոշման դեմ:

Ա/Ձ Յուրի Ճաղարյանի գանգատում բերված փաստարկները.

14.10.2015թ. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից անհատ ձեռնարկատեր Յուրի Ճաղարյանին ուղարկվել է թիվ 177/05 որոշումը՝ հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումար գանձելու մասին:

Համաձայն որոշման 13 հոկտեմբերի 2015թ. դրությամբ անհատ ձեռնարկատեր Յուրի Վահանի Ճաղարյանի չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 167.919 դրամ, որն ամբողջությամբ սոցվճարի գումար է (ապառք 69.500 դրամ, տույժ 83.219 դրամ, տուգանք 15.200 դրամ), որն առաջացել է 2007թ. սոցվճարի տարեկան եկամուտների մասին հայտարարագրից, 2008թ. հունվար ամսվա սոցվճարի ամսական նվազագույն հաշվարկից, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23, 24 հոդվածներով հաշվարկված տույժերից և տուգանքներից, որը ենթակա է գանձման:

Համաձայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1 հոդվածի՝ հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրանալուց հետո, բացառությամբ «Գույքահարկի մասին» և «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերի: Սույն հոդվածի առաջին պարբերության իմաստով հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային պարտավորությունների հաշվարկման առումով խախտման կատարման տարի է համարվում համապատասխան հաշվարկի, հայտարարագրի, հաշվետվության, տեղեկության կամ այլ փաստաթղթի (անկախ դրանց ներկայացման հանգամանքից)՝ հարկային մարմնի ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետի վերջին օրը ներառող օրացույցային տարին:

«Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի խախտումներ հայտնաբերելու դեպքում սոցիալական վճարների գծով պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան հաջորդող երեք տարի հետո:

Վերոնշյալ հոդվածներից հետևում է, որ հարկատուի մոտ հարկային պարտավորություններ չեն առաջանում, եթե վերջինիս կողմից թույլ տրված հարկային օրենսդրության խախտումը դրան հաջորդող երեք տարիների ընթացքում հարկային մարմնի կողմից չի հայտնաբերվում: Նման պայմաններում պարզ է, որ անհատ ձեռնարկատեր Յուրի Ճաղարյանի մոտ չի կարող առաջանալ հարկային պարտավորություն հաշվի առնելով, որ հարկային պարտավորության խախտումները

հարկային մարմնի կողմից հայտնաբերվել են այն կատարելու տարվան հաջորդող երեք տարին լրանալուց հետո:

Բացի այդ, Յուրի Ճաղարյանը երբևէ ձեռնարկատիրական գործունեություն չի իրականացրել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ և 69-րդ հոդվածների դրույթներով Ա/Ձ Յուրի Ճաղարյանը խնդրում է վերացնել 14.10.2015թ. հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին թիվ 177/05 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննարկելով Ա/Ձ Յուրի Ճաղարյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 13.10.2015թ-ի դրությամբ նրա չկատարված պարտավորությունները կազմում են 167.919 դրամ, որն ամբողջությամբ սոցվճարի գումար է (ապառք 69.500 դրամ, տույժ 83.219 դրամ, տուգանք 15.200 դրամ): Նշված պարտավորությունն առաջացել է 2007թ. սոցվճարի տարեկան եկամուտների մասին հայտարարագրից, 2008թ. հունվար ամսվա սոցվճարի ամսական նվազագույն հաշվարկից, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23, 24 հոդվածներով հաշվարկված տույժերից և տուգանքներից, որը ենթակա է գանձման:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 14.10.2015թ-ին ընդունվել է թիվ 177/05 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Ա/Ձ Յուրի Ճաղարյանից 167.919 դրամ պարտավորության գումար գանձելու մասին:

Գանգատում հղում է կատարված «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1 հոդվածի և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներին, որոնց համաձայն օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային և սոցիալական վճարների գծով պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե այդ խախտումները հայտնաբերվել է դրանք կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրանալուց հետո:

Վերոգրյալ իրավանորմերի դրույթներից ելնելով Ա/Ձ Յուրի Ճաղարյանը գտնում է, որ Որոշմամբ գանձման առաջադրված պարտավորությունները հիմնավոր չեն:

Գանգատում բերված փաստարկների կապակցությամբ հարկ է նշել, որ քննարկվող դեպքում գանձման առաջադրված պարտավորությունը ոչ թե հայտնաբերվել է Որոշումը կայացնելիս, այլ այն հարկային մարմնին հայտնի է եղել առաջացման իսկ օրվանից: Մասնավորապես, Որոշմամբ գանձման առաջադրված պարտավորությունն առաջացել է 2007թ. սոցիալական վճարի տարեկան եկամուտների մասին հայտարարագրով և 2008թ. հունվար ամսվա սոցիալական վճարի ամսական նվազագույն հաշվարկով: Այսինքն, նշված հայտարարագրում և

հաշվարկում արտացոլված սոցիալական վճարի գծով պարտավորությունները հարկային մարմնին հայտնի են եղել դրանց ներկայացման օրվանից և հաշվառվել են անհատ ձեռնարկատիրոջ սոցիալական վճարի անձնական հաշվի քարտում: Հետևապես, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1 հոդվածի և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթները տվյալ դեպքում կիրառելի չեն:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ Որոշմամբ գանձման առաջադրված պարտավորությունները հիմնավոր են և ենթակա են կատարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը՝

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 14.10.2015 թ-ի թիվ 177/05 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ